ԹՎԱՅԻՆ ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆԸ, ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ԵՎ ԶՆՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«____»_____ 2022 թվականի N _____-Ն

ԹՎԱՅԻՆ ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆԸ, ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ԵՎ ԶՆՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել թվային տախոգրաֆների կառուցվածքին, շահագործմանը, փորձարկմանը, տեղադրմանը և զննմանը ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույնորոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի օգոստոսի 6-ին:

Հավելված

ՀՀ կառավարության

<<——>>——2022թ. N -Ն որոշման

ԹՎԱՅԻՆ ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆԸ, ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ԵՎ ԶՆՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**
2. Սույն պահանջները տարածվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում կիրառվող թվային տախոգրաֆների (այսուհետ՝ տախոգրաֆ) վրա, բացառությամբ <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերի։
3. Սույն կարգով սահմանվում են թվային տախոգրաֆի կառուցվածքին, շահագործմանը, փորձարկմանը, տեղադրմանը և զննմանը ներկայացվող պահանջները։
4. Սույն պահանջներում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- ***տախոգրաֆի քարտ***՝ թվային տախոգրաֆում օգտագործվող տվյալների էլեկտրոնային գրանցման համար նախատեսված էլեկտրոնային հիշողություն ունեցող քարտ.
- ***շարժման ցուցիչ***՝ տախոգրաֆի բաղկացուցիչ մաս, որն ապահովում է տրանսպորտային միջոցի արագության կամ անցած ճանապարհի տվյալների նշումը,
- ***տրամաչափարկում (կալիբրավորում)***՝ արհեստանոցի քարտի միջոցով տրանսպորտային միջոցի պարամետրերի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի նույնականացման համարի, հաշվառման համարանիշի և այլ պարամետրերի, թարմացում կամ հաստատում, որոնք պահպանվում են տախոգրաֆի հիշողության մեջ.
- ***ակտիվացում***՝ արհեստանոցային քարտի միջոցով տախոգրաֆի բոլոր գործառույթների գործարկում, ներառյալ անվտանգության գործառույթները.
- ***արհեստանոց***՝ համապատասխան որակավորմամբ մասնագետներ ունեցող տախոգրաֆի սպասարկման (տրամաչափում, զննում, վերանորոգում) գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր։
- ***ներբեռնում***՝ տրանսպորտային միջոցի կամ տախոգրաֆի քարտի հիշողության տվյալների պատճենում թվային ստորագրության հետ միասին, որի ընթացքում չի փոխվում կամ ջնջվում որևէ տվյալ.
- ***զննում***՝ գործողություններ, որոնք կատարվում են ստուգելու տախոգրաֆի ճշգրիտ աշխատանքը, դրա պարամետրերի համապատասխանությունը տրանսպորտային միջոցի պարամետրերին, տախոգրաֆի աշխատանքը խախտող այլ սարքերի օգտագործման բացառումը։

1. **ԹՎԱՅԻՆ ՏԱԽՈԳՐԱՖԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

4. Թվային տախոգրաֆը պետք է ունենա էկրան, հիշողության, տվյալների (պարամետրերի) գրանցման և փոխանցման, քարտի տեղադրման և ընթերցման, տեղորոշման համակարգերի հետ միացման սարքեր, որոնք կապահովեն տախոգրաֆի կողմից հետևյալ գործողությունների կատարումը.

- տախոգրաֆի քարտի տեղադրման և դուրսբերման ապահովում.
- տախոգրաֆի քարտի տրամաչափարկում (կալիբրավորում).
- ավտովարորդի կողմից մուտքի գործողության գրանցում.
- տախոգրաֆի հիշողության սարքում տվյալների ձայնագրման, պահպանման և ընթերցման հնարավորություն.
- տախոգրաֆի քարտից տվյալների ընթերցում, տախոգրաֆի քարտում տվյալների ձայնագրում և պահպանում.
- տվյալների սխալների հայտնաբերում և գրանցում.
- աշխատանքի ու հանգստի ժամանակահատվածների, արագության և հեռավորության տվյալների չափում և գրանցում.
- այլ սարքերին տվյալների փոխանցման հնարավորություն.
- տվյալների ցուցադրում, տպում և ներբեռնում։
- տախոգրաֆի քարտի տեսակի որոշում և գործողության ժամկետի ստուգում։

5. Տախոգրաֆը պետք է սահմանի՝

1) տրանսպորտային միջոցի արագությունը մինչև 2 կմ/ժամ արագության սխալանքով.

2) տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը.

3) տրանսպորտային միջոցի արագության և գտնվելու վայրի չուղղված տեսքով կոորդինանտների գրանցումը առնվազն վայրկյանը մեկ.

3) տրանսպորտային միջոցի անցած ճանապարհը։

6. Տախոգրաֆը պետք է գրանցի ավտովարորդի աշխատանքի, վարելու, հանգստի ժամանակահատվածների վերաբերյալ տվյալները։

7. Ժամային գոտիների տարբերությամբ պայմանավորված տախոգրաֆը պետք է սահմանի տեղական ժամանակը ավտոմատ կերպով կամ ձեռքով միացման միջոցով։

8. Երկու ավտովարորդով տրանսպորտային միջոց շահագործելու դեպքում տախոգրաֆը ավտովարորդների քարտերը տեղադրելիս պետք է սահմանի անձնակազմի առկայությունը, իսկ յուրաքանչյուր ավտովարորդի գործունեությունը գրանցի որպես մեկ ավտովարորդի աշխատանքի և հանգստի ռեժիմի տվյալ։

9. Ավտովարորդի կողմից քարտը տախոգրաֆում տեղադրելիս դրա էկրանին պետք է արտացոլվի քարտը տեղադրելու ամսաթիվը, ժամը, ինչպես նաև տվյալ քարտը վերջին անգամ հանելու ամսաթվի և ժամի վերաբերյալ

տվյալները։

10. Տախոգրաֆը պետք է ունենա տեղորոշման որևէ համակարգի միանալու հնարավորություն, տրանսպորտային միջոցի շարժման վերաբերյալ տվյալները գրանցելու համար։

III.ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11. Տախոգրաֆները և տախոգրաֆի քարտերը պետք է ապահովեն հետևյալ պահանջները.

1) գրանցեն ավտովարորդի գործունեության և տրանսպորտային միջոցի հետ կապված ճշգրիտ և հուսալի տվյալները.

2) ապահովեն տրանսպորտային միջոցի շարժման տվիչներից ստացված տվյալների ամբողջականությունն ու ճշգրտությունը.

3) ապահովել փոխգործունակությունը տրանսպորտային միջոցի և տախոգրաֆի քարտի միջև։

12. Տախոգրաֆը պետք է ապահովի՝

1) տրանսպորտային միջոցի արագության և անցած ճանապարհի, ավտովարորդի գործունեության վերաբերյալ ճշգրիտ տվյալների գրանցումը.

2) ավտովարորդի քարտը տեղադրելիս ավտովարորդի տվյալների նույնականացումը.

3) տախոգրաֆի տրամաչափման, վերանորոգման և զննման վերաբերյալ տվյալների գրանցումը, այդ թվում՝ դրանք իրականացնող արհեստանոցների վերաբերյալ տվյալները։

13. Աշխատաժամանակի տվյալների սխալ հայտնաբերելիս կամ արագության խախտումների դեպքում տախոգրաֆը պետք է ավտովարորդներին զգուշացնի խախտումների վերաբերյալ տեսողական կամ ձայնային ազդանշանի տեսքով առնվազն 30 վայրկյան տևողությամբ այնքան ժամանակ, մինչև ավտովարորդի կողմից խախտումը վերացնելը։

14. Տախոգրաֆը պետք է ապահովի տվյալների պաշտպանությունն ու գաղտնիությունը։

15. Կազմակերպություններն ու ավտովարորդներն ապահովում են թվային տախոգրաֆների և քարտերի ճիշտ գործածությունը և սարքին վիճակը։ Տախոգրաֆի սարքին վիճակը ստուգվում է փորձարկման միջոցով։

16. Արգելվում է կեղծել, թաքցնել կամ ոչնչացնել տախոգրաֆում կամ ավտովարորդի քարտի վրա գրանցված տվյալները:

17. Տրանսպորտային միջոցները չպետք է ունենան մեկից ավելի տախոգրաֆ:

18. Տախոգրաֆի անսարքության դեպքում տրանսպորտային միջոցը շահագործող կազմակերպությունը ապահովում է դրա վերանորոգումը և սարքին վիճակում շահագործումը:

19. Եթե անսարքությունը տեղի է ունենում տրանսպորտային միջոցը երթուղի դուրս գալուց հետո, ապա վերանորոգումն իրականացվում է փոխադրման ընթացքում, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վերանորոգման գործառույթը կարող են իրականացնել միջազգային համաձայնագրի անդամ պետությունների արհեստանոցները:

III. ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ԵՎ ԶՆՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

20. Տախոգրաֆը կարող է տեղադրվել միայն տրանսպորտային միջոցը արտադրող գործարանի կամ արհեստանոցի կողմից: Տախոգրաֆը տեղադրվելուց հետո կնքվում է այն տեղադրող կազմակերպության կողմից:

21. Տախոգրաֆը տեղադրվելուց հետո ենթակա է ակտիվացման:

22. Տախոգրաֆի սպասարկումը՝ ակտիվացումը, նորոգումը, տրամաչափարկումը (կալիբրավորումը), զննումը իրականացնում են արհեստանոցները:

23. Տախոգրաֆը տեղադրվելուց, նորոգվելուց, փոխվելուց, ինչպես նաև տրանսպորտային միջոցի տարրերի փոփոխությունից հետո ենթակա է պարտադիր տրամաչափարկման (կալիբրավորման) արհեստանոցի կողմից: Տրամաչափարկումից (կալիբրավորումից) հետո տախոգրաֆի վրա փակցվում է արհեստանոցի տարբերանշանով ինքնակպչող անվանաթուղթ, որը հանելու դեպքում ինքնաոչնչանում է:

24. Արհեստանոցը տախոգրաֆը տրամաչափարկելուց (կալիբրավորելուց) հետո թղթային կամ էլեկտրոնային եղանակով երկու օրինակից կազմում է ակտ, որոնցից մեկը տրվում է փոխադրողին, մյուսը պահպանվում է արհեստանոցում երեք տարի ժամկետով:

25. Տախոգրաֆը պետք է տեղադրվի հստակ տեսանելի դիրքում և պետք է լինի հեշտ հասանելի:

26. Վերանորոգման, զննման կամ այլ պատճառով պայմանավորված տախոգրաֆը հանելու անհրաժեշտության դեպքում կնիքը կոտրվում կամ հանվում է, գրավոր նշելով կնիքը կոտրելու կամ հանելու ամսաթիվը, ժամը և պատճառը։ Կնիքը կոտրելու կամ հանելու վերաբերյալ փաստաթուղթը պետք է պահպանվի տրանսպորտային միջոցում, մինչև տախոգրաֆը կրկին իր տեղում ամրացնելը և կնքվելը։

27. Տախոգրաֆը չպետք է տեղադրվի այնպես, որ այն ինքնաբերաբար գործարկվի, երբ անջատված է մեքենայի շարժիչը։
28. Տախոգրաֆը ենթակա են պարբերական զննման առնվազն երկու տարին մեկ անգամ։

29. Տախոգրաֆի զննման նպատակն է պարզել, թե արդյոք՝

1) այն տեղադրված է ճիշտ և համապատասխանում է տվյալ տրանսպորտային միջոցին.

2) սարքին վիճակում է և ճիշտ է աշխատում.

3) բոլոր կնիքները առկա են և անվնաս.

4) տախոգրաֆը կրում է չափման միջոցի տեսակի հաստատման նշանը.

5) չեն կիրառվել տախոգրաֆի աշխատանքը խախտող այլ սարքեր.

6) տախոգրաֆը տրամաչափարկված (կալիբրավորված) է տվյալ տրանսպորտային միջոցի պարամետրերին համապատասխան։

30. Տախոգրաֆի զննման արդյունքում անսարքություններ կամ խախտումներ հայտնաբերելու դեպքում դրանք պետք է անմիջապես վերացվեն։

31. Արհեստանոցը զննման արդյունքների վերաբերյալ կազմում է ակտ, որը տրվում է փոխադրողին։ Զննման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը արհեստանոցի կողմից պահվում է երկու տարի։